

100 Հարց Ս.

Հաղորդութեան Մասին 99) ինչո՞ւ մեր եկեղեցւոյ մէջ պատարագիչ քահանան մէկ նշխարի կ'օրհնէ:

Հայոց եկեղեցւոյ աւանդութեան համաձայն՝ Ս. Պատարագի ընթացքին կ'օգտագործուի մէկ նշխար, մինչ միւսները մէկէ աւելի: Մեր եկեղեցւոյ վարդապետները կը նշեն, որ Քրիստոս մէկ հաց բարձրացուց, օրհնեց եւ տուաւ իր աշակերտներուն՝ ըսելով «Ասիկա իմ Մարմինն է» (Մատթ. 26/26): Պօղոս առաքեալն ալ կ'ըսէ. «Մենք բոլորս մէկ հաց, մէկ մարմին ենք, որովհետեւ նոյն եւ միակ հացէն կը ճաշակենք (Ա. Կորնթ.10/17) հետաքրքրական է, որ անցեալէն մեզի հասած սկիզբներէն շատերը մեծ բերան ունին, այսինքն՝ հին ժամանակ պատրաստած են աւելի մեծ նշխար, որ պէսզի բաւէ բոլոր ցանկացողներուն:

Մէկ նշխար օգտագործելու ընդիմախօսները երբեմն նաեւ հետեւեալ պատճառաբանութիւնը կը մէջբերեն. ինչպէս քահանան կրնայ մի քանի հոգի մկրտել, նոյն ձեւով ալ կրնայ մի քանի հաց օրհնել: Ի պատասխան ասոր՝ մերինները կը նշեն, որ Քրիստոսի կողմէ մկրտելու պատուէրը յոգնակի էր, իսկ այս պարագային՝ եզակի (տե՛ս Մատթ. 26/28- Ղուկ. 22/19):

ՄՕՏ ՕՐԷՆ Ս. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ ՄԱՍԻՆ ՀԱՐՅՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԻՏԻ ՓՈՒՍԿՆՅԵՆՔ, ՈՒՂՂՈՒԱԾ ՀԱՒԱՏԱՑԵԱԼՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ:

ԱՂԱՆԴԱՒՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ

ԲԱՍԸԼԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՍՈՒՑՈՑ ՊԱՏՄԱԿԱՆԸ

Չգուշացէ՛ք սուր մարգարէներէն, որոնք ոչխարի կերպարանքով կը մօտենան չեզի, մինչ ներքնապէս յափշտակիչ գայլեր են: (Մպք.7.15)

3-ԱՍՏՈՒԾՈՅ ՈՐԴԻՆ՝ ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍ

Հրեշտակներուն համար կ'ըսեն. «Իր հրեշտակները հոգիներ կ'ընեն, իր պաշտօնեաները՝ կրակի բոց: Սակայն Որդին կ'ըսէ. «Քու աթոռդ, Ո՛վ ԱՍՏ-ԻԱԾ, յաւիտեանս յաւիտեանից է. բուքաւորութեան գաւազանդ ուղղութեան գաւազան է, արդարութիւնը սիրեցիր եւ անօրէնութիւնը ատեցիր. անոր համար, ով ԱՍՏՈՒԱԾ, բու Աստուծոյ ուրախութեան իւղով օծեց բեզ, բու ընկերներէդ աւելի: Եւ դարձեալ կ'ըսէ. «Պո՛ւն, ով Տէր, սկիզբէն երկրի հիմքը դրիր, եւ երկինքը բու ձեռքերուդ գործն է. անոնք պիտի կորսուին, բայց դուն կը մնաս. ամէնք լաթի պէս պիտի մաշին, վերաբերուի պէս պիտի գալարես գանձի եւ պիտի փոխուին, բայց դուն նոյն ինքն ես, եւ բու տարիներդ պիտի չպակսին: Եւ հրեշտակներէն, որո՞ւ ըսաւ. Իմ աջ կողմս նստէ, մինչեւ բու թշնամիներդ ոտքերուդ տակ դնեմ իբրեւ պատուանդան: Ձե՞ որ անոնք ամէնք սպասաւորող հոգիներ են, որոնք սպասաւորութեան կը դրկուին անոնց համար՝ որ փրկութիւն պիտի ժառանգեն» (Եբր. 1-2-14):

Միրելի ընթերցող, ՃՐԱԳ քերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ jerak ճրագ քերթ



ԲՈՒ ԽՕՍԲԴ ԽՄ ՈՏԹԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119-105)

ԺԱ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 11 ՄԱՐՏ 2018 ԹԻՒ 10

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄԵՐ ԵՍ. 65.8-25: ՓԻԼ. 3.1-4.9 ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻՏՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 17.20-18.14


ԴԱՏԱՒՈՐԻ ԿԻՐԱԿԻ

Յիսուս առակ մը խօսեցաւ իր աշակերտներուն, ցոյց տալու համար, թէ պէտք է միշտ աղօթել՝ առանց վիատելու: Եւ ըսաւ. «Քաղաքի մը մէջ դատաւոր մը կար, որ ո՛չ Աստուծմէ կը վախճար եւ ոչ ալ մարդոցմէ կ'ամչնար: Նոյն քաղաքին մէջ այրի կին մըն ալ կար, որ իրեն կը դիմէր եւ կը խնդրէր. «Իրաւունքս պաշտպանէ՛ հակառակորդէս»: Դատաւորը երկար ժամանակ մերժեց դատը տեսնել, սակայն ի վերջոյ ըսաւ ինքնիրեն. «Թէեւ Աստուծմէ չեմ վախճար եւ մարդոցմէ չեմ ամչնար, բայց քանի այս այրին նեղութիւն կու տայ ինձի, իր դատը տեսնեմ, որպէսզի մինչեւ վերջ քովս գալով զիս չանհանգստացնէ»: Ապա Տէրը շարունակեց. «Լսեցէ՛ք թէ ի՛նչ կ'ըսէ անիրաւ դատաւորը: Իսկ Աստուած որքա՞ն պիտի համբերէ իր ընտրեալներուն կրած անիրաւութեան, պիտի չպաշտպանէ՞ զանոնք, որոնք գիշեր եւ ցերեկ իրեն կը դիմեն: Այո՛, կ'ըսեմ ձեզի որ անոնց իրաւունքը անմիջապէս պիտի պաշտպանէ: Բայց մարդու Որդին երբ գայ, արդեօք հաւատք պիտի գտնէ՞ երկրի վրայ»:

Այս առակն ալ պատմեց անոնց, որոնք կը պարծենային, թէ արդար են եւ ուրիշները կ'արհամարհէին: «Երկու հոգի տաճար գացին աղօթելու. մէկը՝ փարիսեցի, միւսը՝ մաքսաւոր: Փարիսեցին մէկ կողմ կեցած, առանձին կ'աղօթէր. «Աստուած իմ, շնորհակալ եմ քեզմէ, որ ուրիշ մարդոց նման յափշտակող, անիրաւ, շնացող չեմ, կամ այս մաքսաւորին պէս ալ չեմ: Այլ շաբաթը երկու անգամ ծոմ կը պահեմ եւ իմ եկամուտիս տասանորդը տաճարին կու տամ»: Իսկ մաքսաւորը մէկ կողմ կեցած, աչքերը առանց վեր բարձրացնելու կուրծքը կը ծեծէր, եւ կ'ըսէր. «Աստուած, ներէ՛ մեղաւորիս մեղքերը»: Կ'ըսեմ ձեզի, եզրակացուց Յիսուս, ո՛չ թէ փարիսեցին, այլ մաքսաւորը արդարացած գնաց տուն, որովհետեւ ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, եւ ով որ իր անձը կը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ»:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

Ս. ՔԱՌԱՍՈՒՆ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՏՕՆԸ



Քառասնից Մանկանց տունը կը յիշատակէ Կապադովկիոյ Հոռմէական գօրագունդի պատկանող քառասուն երիտասարդներու նահատակութեան օրը (մանուկ գրաբար լեզուով երիտասարդ կը նշանակէ եւ ոչ մեր հասկացողութեամբ երեխայ):

Հոռմէական բանակէն ներս իիստ հարցաքննութեան մը ընթացքին կը յայտնաբերուի այս երիտասարդ բանակայիններու Քրիստոնեայ ըլլալը: Քանի մը անգամ կ'առաջարկուի անոնց վերադառնալ հին աստուածներու, թէ ոչ՝ ենթարկուիլ հաշուեյարդարի: Երիտասարդները կը յայտնեն, թէ իրենք միշտ եղած են ու կը մնան հաւատարիմ Սեբաստիոյ թագաւորին, սակայն ուխտունին նաեւ անխախտ պահելու երկնաւոր թագաւորին նկատմամբ իրենց հաւատքը:

Իբրեւ պատիժ այս ընդդիմութեան, քառասուն երիտասարդները կը նետուին սառած լիճի մը մէջ: Կը յայտարարեն, եթէ անոնք կ'ուզեն վերադառնալ հին աստուածներուն, լիճին ափին անոնցմէ մէկը միայն չդիմանալով կը վազէ սառած ջուրէն դուրս եւ հազիւ տաք բաղնիք մտած յանկարծամահ կ'ըլլայ: Մնացած երեսունինն կը մնայ անդրդուելի:

Գիշերով երկնային լոյսը կը ճառագայթէ լիճին վրայ, 40 լուսապսակներ կ'երեւին երիտասարդներուն գլուխներուն վրայ: Պահակներէն մէկը ականատես ըլլալով այս հրաշքին, դարձի կու գայ եւ Քրիստոնեայ կը դառնայ: Ապա անմիջապէս կը նետուի սառած լիճին մէջ ու կ'ընդունի փոխարինել ուրացող քառասուներորդ գինուորը:

Սեբաստիոյ մէջ քառասուն գմբէթով տաճար մը կառուցուեցաւ քառասուն երիտասարդներու յիշատակին, որ կանգուն մնաց մինչեւ Լեւկոքիմուրի օրերը, այսինքն՝ 1405 թուականը: Ափիւրհի մէջ եւս կը գտնուին եկեղեցիներ, որոնք կը կրեն Քառասնից Մանկանց անունը, ինչպէս՝ Լիբանանի, Սուրիոյ եւ Ամերիկայի մէջ:

Ս. Քառասնից Մանկանց տունը այս տարի կը գուգադիպի Շարաթ՝ 10 Մարտին: Կիրակի՝ 11 Մարտ հանդիսաւոր Ս. եւ անմահ պատարագ կը մատուցուի եւ մատաղօրհնէք կը կատարուի Ս. Քառասնից Մանկանց Եկեղեցւոյ մէջ, Պուրն Համուտ:

ԾԻՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻԶՆԵՐ

Քահանայական աստիճանէն վար եւ վեր ուրիշ ի՞նչ աստիճաններ կան մեր Եկեղեցւոյ մէջ:

Քահանայութենէն վար վեց աստիճաններ կան, իսկ անկէ վեր՝ երեք:

Վարի վեցը կը կոչուին փոքր աստիճաններ, եւ հետեւեալներն են.

- ա) Դոնապանութիւն,
- բ) Ընթերցողութիւն,
- գ) Երդմեցուցութիւն,
- դ) Զահրնկալութիւն,
- ե) Կիսասարկաւագութիւն,
- զ) Սարկաւագութիւն,
- է) Վերի երեք աստիճաններն են.
- է) Քահանայութիւն
- ը) Եպիսկոպոսութիւն
- թ) Կաթողիկոսութիւն
- Ըսել է, բոլորը միասին, ինք աստիճան:

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

Աստուած է, որ ձեր մէջ կը ներգործէ կամենալը եւ ընելը իր հաճութեան համար: (Փիլիպպեցիս 2-13)

Հետեւեալ խօսքը շատերու կողմէ որդեգրուած սկզբունք մըն է. «Եթէ որեւէ բան քեզի հաճոյ կը թուի, ըրէ՛ առանց վարանումի»: Այս կը նշանակէ, թէ հաճոյքը ինքնին սխալ չէ՝ բայց կրնայ առաջնորդել բարոյական ու հոգեւոր քայքայումի, եթէ Աստուծոյ հոգին չկառավարէ մեզ:

Նկատի առնենք մարդ արարածի բնական փափաքը զգացական եւ ֆիզիքական մտերմութեան նկատմամբ: Բոլորս ալ կարիքը ունինք անոր: Սակայն եթէ այնպէս պատահի, որ անձի մը ամուսնական կեանքին մէջ այդ մտերմութեան կարիքը գոհացում չի գտներ՝ զայն ուրիշ տեղ փնտռելը կ'առաջնորդէ սխալ ճամբաներու եւ հոգեկան ու բարոյական քայքայումի: Բնական է փնտռել հաճոյքը եւ խուսափիլ ցաւէն: Հետեւաբար դիւրին է ընդունիլ այն գաղափարը, թէ ինչ որ հաճոյք կը պատճառէ չի կրնար սխալ ըլլալ: Բայց չմոռնանք որ մեր զգացումները ապահով առաջնորդներ չեն:

Քանի որ մենք մեղանշական բռնութիւն ունինք, մեզի համար անհրաժեշտ է ունենալ փափաք մը, որ աւելի բուռն ըլլայ քան՝ մեր ուրիշ փափաքները: Այս փափաքը մեր մէջ յառաջ կուգայ երբ հաւատանք Յիսուս Քրիստոսի եւ Աստուծոյ հաճելի կեանք մը ապրիլը դառնայ մեր բուռն փափաքը: Այս փափաքը կրնայ մեղմանալ կեանքի պարագաներուն տակ, բայց Աստուած մեր մէջ կը ներգործէ «կամենալը եւ ընելը իր հաճութեան համար»: Արդեօք ի՞նչ է բուռն մեծագոյն փափաքը:

Երբ կը բաղձաս Աստուծոյ հաճելի ըլլալ, ըրէ՛ ինչ որ կրնաս:

ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

ՀԱՆՍՏՈՂԸ ԻՆՔՆ Է, ՈՐ ԿԸ ՀԱՆՍՏՈՒԻ

Որքան ալ թուի մեզ, որ աշխարհի մարդը կը հալածէ Աստուծոյ մարդուն, խորքին մէջ սակայն ինքն է, որ կը հալածուի անկէ: Հալածուած զգալն է, որ զինք կ'առաջնորդէ հալածելու ուրիշները: Սաւուղ պիտի չհալածէր Դաւիթը, ո՛չ ալ Յովսէփին եղբայրները՝ Յովսէփը, կամ Փարիսեցիները՝ Յիսուսը, եթէ երբեք իրենք զիրենք հալածուած չզգային անոնց կողմէ: Ծշմարիտ հաւատացեալ մարդոց դիմաց անհաւատներ խռովութեամբ կը լեցուին: Աստուծոյ մարդուն ներկայութիւնը տանջանք է աշխարհաւոր մարդոց համար: Զրիստոսի ներկայութիւնը տանջանք մը չէ՞ր Փարիսեցիներուն եւ հրեայ բոլոր ղեկավարներուն համար: Իսկ դու՛ն, ընթերցող, տանջո՞ղ ներկայութիւն ես, թէ՛ տանջուող:

ԵԿԷՔ ՄԻԱՍՆԱԲԱՐ ԱՂՕԹԵՆՔ

Ո՛վ Աստուած մեր հօր արարիչն ու հոգատար Փրկիչը, Զեզի՛ կը վայելէ ամէն օրհնութիւն եւ օրհներգութիւն, որովհետեւ Դո՛ւն ես, որ մարդիկը կ'օրհնես:

Զեզի կը վայելէ ամէն փառք ու բարեբանութիւն, որովհետեւ Դո՛ւն ես որ մարդիկը բարեսէր ու բարեգործ կը դարձնես

Զեզի՛ կը վայելէ ամէն մեծութիւն ու մեծավայելչութիւն, որովհետեւ Դո՛ւն ես որ մարդիկը կը մեծցնես ու կ'աճեցնես: